

ՅՈՒԵԼԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՇ

ՔԱՐԻՉ, Հոկտ. 22

Հայ գրերու գիւտին եւ տպագրութեան Մեծ Յօրելեանին առթիւ կազմելի դրամագլխին կուգամ իմ համեստ բաժինս բերել ներփակ ուղարկելով հարիւր Ֆրանքի չէք մը Օսմ. դրամատան վրայ, զոր հաճեցէք իր նպատակին հասցնել եւ երախտապարտ թողուլ զիս.

Ընդհ. Հայութեան մէջ հանգանակելի զուամարին զորձածութեան համար Ազգ. իշխանութիւնք լուսագոյն խորհուրդները պիտի յղանան անշուշտ. սակայն միակ իղծը՝ որուն մարմին առնելուն կարծեմ ամեն Հայ համամիտ պիտի ըլլայ՝ սա է թէ ժամ առաջ ազատած տեսնենք անզուգական Մեծ Հայրապետին գերեզմանը արդի անշուք վիճակէն եւ անոր տեղ կանգնուի փառաւոր մի շիրիմ՝ ի նշան անհուն երախտագիտութեան ցեղի մը որ շատ բան կ'պարտի իր զրական Լուսաւորչին. Կ'սիրեմ յուսալ թէ դուք եւս ձեր կողմէ պիտի հաճիք ոյժ տալ սոյն թելադրութեան ձեր հանրօգուտ թիրթին մէջ այն հեղինակութեամբ որ «Բիւզանդիոն»ի միայն յատուկ է:

Գրէիք-ք Գ. Փ-ը-ք-ն

ՅՄԼՆ. ԽՄԲ. — Յօրելեան Դրամագլխի Պոլսոյ Մասնախմբէն կ'խնդրենք բժկալագրով մը մեզմէ ստանալ վերոյիշեալ 100 Ֆր.ի չէքը: